# ԿՈՆԳՐԵՍ ՓԱՐԻԶՈՒՄ

Փարիզում հուլիսի 20-23-ը տեղի ունեցավ Հայ կանանց միջազգային ասոցիացիայի երկրորդ կոնգրեսը, որտեղ ԼՂՀ-ն ներկայացնում էին Ազգային ժողովի նախագահ Էմմա Գաբրիելյանը եւ առողջապահության նախարար Զոյա Լազարյանը: Ինչպես նշեց Է.Գաբրիելյանը, համաժողովի ընթացքում քննարկվել են հասարակական-քաղաքական հարցերի լայն շրջանակ եւ կանանց դերը դրանց լուծման գործում: Համաժողովի գլխավոր արդյունքը, ըստ նրա, համազգային խնդիրների իրականացման համար ամբողջ հայ ժողովրդի համախմբման անհրաժեշտության ըմբռնումն էր: Նա հաղորդեց, որ կոնգրեսի շրջանակում կազմակերպվել է Լեռնային Ղարաբաղի խնդրին նվիրված կլոր սեղան, որի մասնակիցները ելույթ են ունեցել ի պաշտպանություն հանուն իր ինքնորոշման Արցախի պայքարի: Է.Գաբրիելյանի վկայությամբ, ղարաբաղյան հակամարտության պատմական ասպեկտներին եւ դրա էվոլյուցիային համաժողովի պատվիրակների ծանոթությունը թույլ տվեց նրանց ավելի ամբողջական պատկերացում կազմելու խնդրի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում բանակցային գործընթացի ներկա վիճակի վերաբերյալ:

Ն Տ